

Աշխարհագրություն

УДК 338

**ԹԵՇՐԱՎՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ*, ՀՈՍԵՅՆ Է. ՔԻԱՍԱՐԻ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում փաստական նյութի, վիճակագրական տվյալների վերլուծության և ընդհանրացման հիման վրա նկարագրված է Թեհրանի նահանգի զբոսաշրջության որորության հիմնական ենթակառուցվածքների՝ հյուրանոցային տնտեսության, օդային տրանսպորտի, ավտոտրանսպորտի, գրասավարների ինստիտուտի և հասարակական սենյի ծառայությունների ժամանակակից վիճակը և զարգացման խնդիրները:

Keywords: Tehran Province, tourism infrastructure, hotel services, transport services, food services, guides, development issues.

Ներածություն: Զբոսաշրջային ողջ գործունեությունը, առևտրային գործունեության մի տեսակ է՝ ծառայությունների և դրանց զանազան համադրումների վերավաճառման շուկա: Ծառայությունները չեն ստեղծվում տուրօպերատորների կողմից, այլ գոյանում են որպես ծառայություն մատակարարող առևտրային և ոչ առևտրային ընկերությունների գործունեության արգասիք: Այդպիսիք են՝ հյուրանոցային համալիրները և զբոսաշրջիկների գիշերակացի այլ վայրերը, տրանսպորտային ընկերությունները, զբոսավարների ինստիտուտը, հասարակական սենյի և զվարճակի հաստատությունները, թանգարանները ու տեսարժան վայրերը և այլն: Տուրօպերատորի շուկայական դերն այդ ծառայությունների ամփոփումն է զբոսաշրջային փաթեթի մեջ և հետագա վաճառքը տուրքորդականներին կամ վերջնական սպառողներին:

Զբոսաշրջային գործունեության հիմքը զբոսաշրջային փաթեթներն են, որոնք ներառում են ծառայությունների առնվազն երկու գործառույթ՝ հյուրանոցային և տրանսպորտային: Զբոսաշրջային փաթեթի գնի մեջ հյուրանոցային մասը կարող է հասնել մինչև 60–65%-ի, որն էլ հիմնականում պայմանավորում է փաթեթի լուրիանուր շուկայական գինը [1]:

Թեհրանի նահանգի զբոսաշրջային ենթակառուցվածքը:

Հյուրանոցային տնտեսությունը: Հյուրանոցային ընկերություններն իրանում մասնավոր տնտեսվարող սուբյեկտներ են: Որոնց կառուցումն ու հետագա շահագործումը խրախուսվում է պետության կողմից: Սրանով, կարծես, պետության մասնակցությունը վերանում է, և տուրօպերատոր-հյուրանոց փոխարարերությունները մնում են միայն շուկայի կարգավորման հույսին:

* E-mail: a.potosyan@ysu.am

Մտահոգիչ է այն, որ զբոսաշրջային ընկերությունը հաճախ մնում է «խաղից դուրս», հանդիսանալով՝ կապող օդակ ողջ ոլորտի համար:

Չափ երկրներում պետական վերահսկողության և մոնիթորինգի պակասի պատճառով հյուրանոցային տնտեսությունները կառուցվում են տարերայնորեն՝ թե՛ սպասարկման չափանիշների, և թե՛ նպատակների առումով: Տնտեսության բարձր ռիսկայնությունը ձեռներեցներին մղում է ներդրված միջոցներն արագորեն ետ բերելու պահանջի, որն էլ հաճախ հանգեցնում է դաշտի աղավաղմանը: Թերևս սա է պատճառը, որ իրանում կառուցվող հյուրանոցների մեծ մասի բաժնետերը հավակնում են 4 և 5 աստղերի կարգավիճակի, չնայած որ սպասարկման առումով իրականում շատ են ետ մնում: Տնտեսական հետազոտությունների պակասը և տուրոպերատորների կարծիքն անտեսելու հետևանքով շատ հյուրանոցներ այսօր սնանկացման եզրին են, քանի որ չեն պահպանվել և կիրառվել տնտեսական առաջադրանքի կամ գործարար-պլանի տարրական նորմերը: Հյուրանոցային տնտեսությունների հետ փոխհարաբերությունների թեման ցավուտ է հատկապես այն պատճառով, որ հյուրանոցային մասը կազմում է զբոսաշրջային փաթեթի ինքնարժեքի մեծ մասը [2]: Այժմ իրանական շուկայում գործում են զբոսաշրջային կարգի և հարմար տեղաբաշխում ունեցող հյուրանոցային համալիրները: Հիմնախնդրային է նաև հյուրանոցների ուղիղ և հաճախ անհարկի շուկայավարման գործունեությունը: Սակայն նրանց զբաղվածությունն ապահովող հիմնական սուրյեկտը պետք է լինի զբոսաշրջային ընկերությունը: Անհասկանալի է հյուրանոցների վարած գնագոյացման քաղաքականությունը: Որպես անօգուտ մարքետինգային գործունեության օրինակ կարելի է բերել, մասնավորապես, հյուրանոցների ուղիղ մասնակցությունը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, արդյունքում՝ տարեցտարի փոխվում են և՛ հյուրանոցային սակագները և՛ փաթեթի արժեքները, որը բացասարար է ընկալվում զբոսաշրջային մրցակցային շուկայում: Արդյունքում հյուրանոցներն ուշ են հրապարակում առաջիկա զբոսաշրջային սեզոնի սակագները, նկատելիորեն բարդացնելով իրանական զբոսաշրջային ապրանքի առաջխաղացումը միջազգային շուկայում: Արտասահմանյան գործակալները միշտ ել նախընտրում են կանխատեսելի և կայուն գործընկերներին:

Հյուրանոցային համալիրի շահութաբերության համար, անհրաժեշտ է ապահովել միջինը տարեկան 45–47% զբաղվածություն, աշխարհում ընդունված միջինը ցուցանիշը 75–80% է: Համաձայն պաշտոնական տվյալների Իրանում այն կազմում է մոտ 40%, սակայն այլ գնահատականներով չի գերազանցում տարեկան միջինը 30%-ը [3]: Այսպիսով՝ հյուրանոցները մի կողմից ստիպված են աշխատել ուղացված սակագներով, իսկ մյուս կողմից՝ դիմագրավել գնային մրցակցությանը: Արկա է նաև շուկայի սահմանափակության և հոսքերի սակավության խնդիր, որն էլ հենց լրջագույն հոգածության առարկա է Իրանի հյուրանոցային տնտեսության համար:

Թեհրանի նահանգի բնակավայրերում գիշերակաց վայրերի հնարավորությունների համալիրը խմբավորվում է երկու գլխավոր բաժինների [4]:

1. *Հյուրընկալման պաշտոնական կեցավայրեր*, որոնք պետական որևէ օրգանի կամ կառույցի բույլտվությամբ կամ հանրային կառույցների միջնորդությամբ կազմավորված համալիրներն են: Արանք, սովորաբար, իրենց տարեկան գործունեության գեկույցն են ներկայացնում իրանաշրջության և զբոսաշրջության կազմակերպությանը:

Պաշտոնական կեցավայրերն իրենց հերթին ունեն երկու ենթարաժին: Առաջինը՝ կառուցվել է միայն հյուրերի և գրոսաշրջիկների կողմից օգտագործվելու նպատակով և իր մեջ ներառում է հյուրանոցներ, պանսիոնատներ, բնակարան-հյուրանոցներ, քարավանատներ: Երկրորդը՝ ստեղծվել է պետական ոչ պետական կառույցների կողմից իրենց աշխատողների և հյուրերի համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Սրանք ևս իրավասու կենտրոններին գեկույց են ուղարկում իրենց գործունեության մասին:

2. Հյուրընկալման ոչ պաշտոնական կեցավայրերն այն օբյեկտներն են, որոնք իրական ամձանց միջոցով ճանապարհորդությունների պետական առաջադրանքների ժամանակ վարձակալական իմունիքներով տրամադրվում են գրոսաշրջիկներին: Սրանք իրենց հերթին բաժանվում են չորս խմբի՝ տնային վարձակալական, վիճակներ, այգիներ և ճամբարներ: Բայց, այս կարգի կեցավայրերի վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալներ ձեռք բերել չի հաջողվել:

Ըստ Իրանի գրոսաշրջության կազմակերպության՝ ընթացիկ դասակարգման գիշերակաց վայրերը դասակարգված են. հյուրանոցների, բնակարան-հյուրանոցների, պանսիոնատների, հանրակացարանների, գրոսաշրջության ճամբարների, ծովափնյա վիլաների, հանքային բուժիչ ջրերի և աղբյուրների մոտ հանգստյան տների և մոթելների [3]:

Իրանի և Թեհրանի նահանգի գրոսաշրջության կազմակերպությունների հաղորդած տեղեկությունների և տվյալների համաձայն՝ Թեհրանում գոյություն ունեն հյուրընկալման 110 վայր, 77 ժամանակակից հյուրանոց և 12 բնակարան-հյուրանոց (աղյ. 1) [3]:

Աղյուսակ 1

Թեհրանի նահանգի հյուրընկալման կեցավայրերի տարրությունը

| Տեսակը | Քանակը | Սենյակների թիվը | Մահճակալների թիվը |
|--------------------|--------|-----------------|-------------------|
| Հյուրանոց | 77 | 5186 | 10029 |
| Ուղևորների տուն | 110 | 2766 | 7149 |
| Բնակարան-հյուրանոց | 12 | 374 | 758 |
| Ընդամենը | 199 | 8326 | 17936 |

Իրանում հյուրընկալման կեցավայրերի 16%-ը տեղակայված է Թեհրանի նահանգում, իսկ 84%-ը բաժին է ըկնում երկրի մնացած շրջաններին:

Աղյ. 2-ում բերված թվերը ցույց են տալիս, որ Թեհրանի նահանգում երկաստղանի հյուրանոցներն ամենաշատն են, ինչը նշանակում է, որ նահանգի բնակավայրերի ընդհանուր այցելուները նախընտրում են ոչ քանի, այլ ընդհանուր, պատշաճ և հարմարավետ կեցավայրեր:

Աղյուսակ 2

Թեհրանի նահանգի հյուրանոցների ըստ կարգի

| Հյուրանոցի տեսակը | 1 աստղ | 2 աստղ | 3 աստղ | 4 աստղ | 5 աստղ | Ընդ. |
|-------------------|--------|--------|--------|--------|--------|------|
| Քանակը | 18 | 29 | 18 | 8 | 4 | 77 |
| % | 23,4 | 37,7 | 23,3 | 10,4 | 5,2 | 100 |

Այսպիսով,

• չորս և հինգ աստղանի հյուրանոցներ ունենալու շնորհիվ Թեհրանի նահանգը հյուրընկալման կազմակերպման առումով առավել նպաստավոր իրավիճակում է գտնվում;

• արտասահմանյան այցելուների 39%-ը, որոնք բնակվում են հյուրանոցներում, քամին է ընկնում Թեհրանի նահանգին: Դրա պատճառը Մեհրաբաղի օդանավակայանի գոյությունն է, ինչպես նաև բազմաթիվ տուրիստական գործակալների ներկայությունը: Սակայն այսուղի գիշերակաց են անցկացնում նաև առևտորի և վարչական գործերի համար Իրան ժամանած արտասահմանյան ուղևորները;

• հյուրանոցում գիշերակաց անցկացնող իրանցի ուղևորների 18%-ը հիմնականում բնակվել են նահանգի կեցավայրերում: Համեմատելով նահանգի բաժնեշափի հետ ստանում ենք երկրի ընդհանուր հյուրանոցների 11,2%-ը: Հաշվի առնելով Մեծ Թեհրանի հյուրընկալման կեցավայրերի քանակը, կարելի է նշել նահանգի տեղափորձան միջոցների գործունեության արդյունավետության և մեծ տարողության մասին:

Օդային տրանսպորտ: Թեհրանի նահանգի օդային կապն իրականացվում է Մեհրաբաղի մեծ օդանավակայանի միջոցով կատարվում են ուղևորափոխադրումներ ու բեռնափոխադրումներ ազգային ու միջազգային մակարդակներով և Թեհրանի նահանգը կապում է աշխարհի տարբեր կետերի հետ [5]: 2013 թ.-ին այս օդանավակայանից կատարվել է 73814 քոհչը (80,5%-ը՝ 59451 ներքին չվերթեր; 19,5%-ը՝ 14363 միջազգային չվերթեր):

Աղյուսակ 3

(Թեհրանի նահանգի օդային կապերը (Մեհրաբաղի օդանավակայան, 2013))

| Կապի ձև | Թոփքների թիվը | | | Ուղեվորների թիվը (հազար) | | |
|------------|---------------|-------|-----------|--------------------------|------|-----------|
| | մուտքի | ելքի | ընդհանուր | մուտքի | ելքի | ընդհանուր |
| Ներքին | 29671 | 29780 | 59451 | 3476 | 3441 | 6917 |
| Միջազգային | 7268 | 7095 | 14363 | 971 | 1012 | 1983 |
| Ընդհանուր | 36939 | 36875 | 73814 | 4447 | 4453 | 8900 |

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուղևորություններն իմնականում կատարվել են ամռանը՝ մարտի վերջից մինչև աշնան սկիզբ: Այդ ուղևորությունների մի մասն, անկասկած, կատարվում են զրոսաշրջության, մյուս մասը՝ այլ նպատակներով: Բոլոր դեպքերում, դրանք մտնում են նահանգի մասշտաբով կատարվող ընդհանուր զրոսաշրջության նախագծի մեջ:

Այսպիսով, ուղիղ կապերի համակարգի բարելավումը, ինչպես նաև օդային կապի հետ կապված համապատասխան սարքավորումների ու կառույցների կատարելագործումն այս պայմաններում այլ նախաձեռնումների հետ միասին այն ուղիներից են, որոնք կնպաստեն զրոսաշրջային ուղևորությունների թվի ավելացմանը Թեհրանի նահանգում:

Հաստ վիճակագրական տվյալների, Iran Air օդային ընկերությունը մատուցել է նահանգում օդային ուղևորափոխադրման ծառայությունների մեծ մասը (73%-ը՝ մուտք գործած ուղևորներից և 72%-ը՝ մեկնող ուղևորներից): Հաջորդը՝ Asman օդային ընկերությունն է, որը կատարել է հիմնական քոհչների 20%-ը և տեղափոխել ուղևորների 16%-ը: Caspian և Mahan Air օդային

ընկերությունները ուղևորափոխադրումների շուկայում ունեն 10-ական % մասմաքածին: Նահանգի օդային մյուս ընկերություններն էական ազդեցություն չունեն ներգնա գրոսաշրջության զարգացման վրա, թեպետ մեծ ներուժ ունեն ներքին ուղևորափոխադրումների ոլորտում [6]:

Միջազգային օդային փոխադրումների առումով Իրանը բավականաշափ մեծ առաջնորդաց է արձանագրել, մի շարք միջազգային առաջատար ընկերությունների կողմից դեպի Իրան կատարվող կանոնավոր չվերթների (British Midland International, Air France, Austrian Airlines, Czech Airlines, Aeroflot, Air Baltic և այլն), ինչպես նաև պարբերաբար կազմակերպվող չարտերային թոփչքների շնորհիվ:

Դեպի Իրան կատարվող օդային փոխադրումների գլխավոր խոչընդոտը տեղափոխման բարձր սակագներն են, որոնք չեն խրախուսում գրոսաշրջության զանգվածային բնույթի կայացմանը: Հասկանալի է, որ միջազգային գրոսաշրջության իրանական ուղղությունը մատչելի է միայն միջինից բարձր ֆինանսական կարողություն ունեցող խավերին, քանի որ եվրոպացի միջին գրոսաշրջիկը ցանկանում է ողջ փաթեթի համար ծախսել ամենաշատը 800–850 եվրո [7]: Իրանն այսօր հիմնականում վաճառում է այսպես կոչված «կրոնական գրոսաշրջային ապրանք», որը գրափում է միջին և ավելի բարձր վճարումնակ հավատացյալների խավերին, սակայն չի կարող շահագրգռել երիտասարդ և ավելի համեստ հնարավորությունների տեր մարդկանց:

Զրոսաշրջության առաջընթացի համար իր դերը կարող է ունենալ նաև փոքր ավիացիայի զարգացումը: Վերջինս Իրանում դեռևս թույլ է զարգացած, սակայն աստիճանաբար դրա պահանջը մեծանալու է, հատկապես ժամանակակից ուղղարկուների և օդանավերի կիրառման պայմաններում:

Ավտոտրանսպորտ: Իրանում արդեն գործում են մի շարք մասնագիտացված ավտոբներություններ, որոնք կարող են գրոսաշրջիկներին տրամադրել միջազգային շափանիշներին համապատասխանող ավտորուսներ և միկրոավտոբուսներ: Կարևոր է նաև սեփական փոխադրամիջոցների ձեռքբերումը, որը, որպես հիմնական կապիտալ միջոց, կարող է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և աստիճանաբար դիմագրավել մրցակցային թեժ պայքարին՝ գների իշեցման շնորհիվ [8]: Սակայն, այսօր, Իրանում ընդամենը մի քանի ընկերություն կարող են իրենց թույլ տալ սեփական փոխադրամիջոցներն ունենալ, քանի որ դա կապված է մի շարք տնտեսական ռիսկերի հետ: Մտահոգիչ է այն, որ անկախ գրոսաշրջիկները և գնային դեմագին կիրառող մի շարք ընկերություններ փորձում են աշխատել ոչ գրոսաշրջային նշանակության ավտոտրանսպորտի հետ, ինչը ունի մի շարք ֆիզիկական վտանգավոր հետևանքներ: Այսինքն՝ անհրաժեշտ է պետական միջամտություն, որպեսզի շուկան կանոնակարգվի, թեկուզ հանուն գրոսաշրջիկների անվտանգության:

Նահանգում, զարգացման նախնական փուլում են նաև այլ փոխադրամիջոցները: Իր ուրույն դերն ունի նաև ավտովարձույթի ընկերությունների աստիճանական ձևավորման ակտիվ աշխատանքը: Ելնելով առկա ավտոճանապարհների վիճակն անհրաժեշտ է նշել այն առանցքային ուղիները, որոնք կենսունակ են և կարևոր դեր են կատարում նահանգի գրոսաշրջության ոլորտի զարգացման հարցում: Դրանք կարևորվում են երկու տեսանկյունից և բաժանվում են երկու գլխավոր խմբի:

Առաջին խումբ՝ տրանսպորտային ուղիները գրոսաշրջային փոխադրումների գործում տարանցիկ դեր ունեն և գրոսաշրջիկներին սկզբնակետից

դեպի նպատակակետն ենհասցնում, գտնվելով արտաքին ու ներքին զբոսաշրջային շուկայի տրամադրության տակ:

Երկրորդ՝ խումբ՝ տեղական բնակչության ուղևորափոխադրումներին ծառայելուց բացի, հետաքրքրություն են ներկայացնում նաև զբոսաշրջիկների համար, որն էլ հանդիսանում է զբոսաշրջիկների երթևեկության գլխավոր դրապատճառներից մեկը:

Նահանգում առկա մոտ 25 հազ. ավտոտրանսպորտային և ուղևորափոխադրող միջոցներն ապահովում են աշխատանքով մոտ 90 հազ. մարդ, որը կազմում է նահանգի տնտեսապես ակտիվ ընդհանուր աշխատանքային ռեսուրսների 0,3%-ը [6]:

Թեհրանն ունի այլ նահանգների վարչական շրջանների միջև ավտոտրանսպորտային ուղևորափոխադրումներ իրականացնող 27 ընկերություններ: Թեհրանին հաջորդում են Վարամինի վարչական շրջանը, Դամավանդը և Քարաջը, որոնք ունեն համապատասխանաբար 10, 6 և 5 ուղևորափոխադրող ընկերություններ: Նահանգի մնացած վարչական շրջաններն ունեն երկուական ուղևորափոխադրող ընկերություն, իսկ Էլամշահը և Շեմիրանաք վարչական շրջաններում այդպիսիք չկան:

Թեհրան քաղաքում նահանգի քաղաքաբնակների գերակշիռ մասի կենտրոնացումն իր ազդեցությունն է քողել քաղաքի ենթակառուցվածքների, այդ թվում նաև փոխադրամիջոցների հնարավոր կենտրոնացման վրա: Նմանատիպ ուղևորափոխադրամիջոցների հնարավորությունների կենտրոնացումը պարզապես անհամարեա երևոյթ է Իրանի քաղաքային բնակավայրերում:

2013 թ.-ին Թեհրանի նահանգի ճանապարհային կապի համակարգի շրջանակներում 1 մլն. 362 հազ. ուղևորություն է կատարվել, որի արդյունքում նահանգում տեղափոխվել է 24 մլն. 690 հազ. ուղևոր: Ուղևորությունների 76%-ը, փոխադրամիջոցների 81%-ը և ուղևորների 81%-ն եղել են Թեհրանի նահանգից: Ուղևորափոխադրումների հիմնական մասը կատարվել է փոխադրող խոշոր տրանսպորտային ընկերությունների կողմից, փոքր տրանսպորտային ընկերություններին բաժին է ընկնում ուղևորությունների 17%-ը և ուղևորափոխադրումների 16%-ը: Տեղափոխման ծավալի առումով դրանք զբաղեցնում են երկրորդ տեղը [6]:

Գրեթե բոլոր վարչական շրջաններում ավտորուար հանրային ուղևորների ամենակարևոր փոխադրամիջոցներից մեկն է: Բնական է, որ նահանգի ընդհանուր բնակչության մեծ մասն ընդգրկող Թեհրանին բաժին է ընկնում ընդհանուր ուղևորությունների և ուղևորների տեղափոխման գերակշիռ մասը: 2013 թ.-ին Թեհրանի նահանգի ցամաքային տեղափոխման ավտոպարկը կատարել է ուղևորությունների 87%-ը և ուղևորների փոխադրման 86%-ը: Թեհրանի փոխադրամիջոցների ավտոպարկի առավելությունը հատկապես ուղևորության և մարդատար սովորական մերենաների միջոցով ուղևորների տեղափոխության առումով մեծ նշանակություն ունի: Այս նահանգին են պատկանում մարդատար բոլոր մերենաների ընկերություններն՝ իրենց ուղերքներով և ուղևորափոխադրումներով:

Ներքաղաքային հանրային տրանսպորտայինմիջոցները նահանգի տարբեր շրջաններում բաշխված են շատ անհավասարաշափ: Թեհրանն իր տարածքով և քաղաքային տնտեսության հսկայածավալ ենթակառուցվածքով կենտրոնացրել է ներքաղաքային փոխադրամիջոցների հիմնական մասը: Նրան բաժին է ընկնում ներքաղաքային փոխադրամիջոցների 95%-ը:

Թեհրանի նահանգում երկաթուղային տրանսպորտն աշխատում է հիմնականում ներքին փոխադրումների և հարևան երկրների հետ կապ հաստատելու համար, սակայն իր ցածր արագության և սպասարկման որակի պատճառով չի բավարարում գրուաշրջության արդի պահանջները:

Փոխադրման այլնուրանքային միջոցները (հեծանվային, հետիոտն, մոտոսկուտերներ, ձիեր, ավանակներ և այլն) գունվում են զարգացման սաղմնային փուլում և չեն կարող մեծ դեր ունենալ գրուաշրջային փոխադրումների մեջ:

Զրուավարներ: Զրուաշրջության ինդուստրիայի այս ճյուղը համեմատաբար քիչ է սուստէլ Իրանի տնտեսական և քաղաքական մեկուսացման պատճառով և այսօրվա դրությամբ հաջողությամբ համագործակցում է ներգնա գրուաշրջության տնտեսվարողների հետ: Փոխարենը առկա է մեկ այլ խնդիր՝ սերնդափոխությունը, ինչպես նաև գրուավարների արտահայտված կրոնական ուղղվածությունը, քիչ են նոր սերնդի գրուավարները: Վերջիններիս վերապատրաստման կուրսերը կրում են ոչ պարբերական բնույթ, հստակեցված չեն որակավորման և լինցեզավորման խնդիրները: Այս պատճառով էլ առաջատար տուրովերաստորները նախընտրում են գործ ունենալ հին դպրոցի գրուավարների հետ, եթե նրանք անգամ չեն անցել հավաստագրման պահանջվող կարգը:

Հասարակական սմնդի հաստատություններ: Թեհրանի նահանգի գրուաշրջային ներուժի այս բաղադրիչն ներկայումս բացարձակ դուրս է պետական հակողությունից, զարգացել է տարերայնորեն: Այստեղ գործում են բազմաթիվ ռեստորաններ, արագ սմնդի կետեր, արճարաններ և այլ օբյեկտներ, որոնք հիմնականում գտնվում են Թեհրանի կենտրոնում և գրուաշրջիկների հիմնական այցելության վայրերում: Զրուաշրջիկների սնման այս օբյեկտները կատարում են իրենց գործառույթները, սակայն Թեհրանից դուրս դրանց որակը մնում է ցածր: Այս բնագավառում նույնպես պետական միջամտության կարիք կա:

Այսպիսով, Թեհրանի նահանգի գրուաշրջության ոլորտի հիմնական ենթակառուցվածքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նահանգում գրուաշրջության հետագա առաջընթացը, մասնավորապես, իրանական գրուաշրջային արտադրանքի առաջխաղացում միջազգային շուկայում և ներքին գրուաշրջության աշխարհագրության ընդլայնումը, մեծապես պայմանավորված է նահանգի գրուաշրջային հիմնական ենթակառուցվածքների զարգացումից և կատարելագործումից, նահանգի գրուաշրջային տարբեր դեստինացիաներում դրանց համաշափ տեղաբաշխումից և զարգացումից:

Ստացվել է՝ 15.07.2016

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Волков Ю.В.** Введение в гостиничный и туристический бизнес (учеб. пособие для студентов вузов, обуч. по эконом. специальностям, 2-е изд.). Ростов-на-Дону: Феникс, 2006.
2. **Брайшер Р.А.** Основы управления в индустрии гостеприимства. М.: Аспект-Пресс, 1995.
3. Իրանի նահանգների գրուաշրջության և ձեռքի աշխատանքները: Տորիստական կացարանների և հյուրանոցների վիճակագրություն: Մշակութային ժառանգության կազմակերպություն, 2012 (պարսկերեն):
4. “Փարադազ” ճարտարագիտական խորիդատվության կենտրոն: Ոչ պաշտոնական կացարանների կազմակերպումը և նրանց հնարավորությունների ընդլայնումը՝ քաղաքային բարեկարգման առաջնահերթությամբ: Շինարարության և բարեկարգման մասնագիտական մայր ընկերություն: Թեհրան, Զեկուցագիր, հատոր Ա, 1999 (պարսկերեն):

5. Իրանի ճանապարհային ատլաս: Շանապարհների և տրանսպորտի նախարարություն, Տերմինալերի և տրանսպորտի կազմակերպություն: Թեհրան, Ա կրա., 2007 (պարսկերեն):
6. Թեհրանի նահանգի վիճակագրական օրացույց, 2013 (պարսկերեն):
7. **Seetanah B.** Transport Economic Performance, the Case of Mauritius. // Journal of Transport Economics and Policy, 2008, v. 42, p. 1–13.
8. **Илина Е.Н.** Менеджмент транспортных услуг. М.: РМАТ, 1999.

А. А. ПОДОСЯН, ХОССЕИН Э. КИАСАРИ

ОСНОВНЫЕ ИНФРАСТРУКТУРЫ И ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СФЕРЫ ТУРИЗМА ТЕГЕРАНСКОГО ОСТАНА

Резюме

В статье представлено современное состояние и проблемы развития сферы туризма Тегеранского остана на основе анализа и обобщения фактического материала и статистических данных его основных инфраструктур – гостиничного хозяйства, воздушного и автомобильного транспорта, общественного питания, института экскурсоводов.

A. H. POTOSYAN, HOSSEIN E. KIASARI

BASIC INFRASTRUCTURES AND THEIR DEVELOPMENT ISSUES OF TOURISM SECTOR IN TEHRAN PROVINCE

Summary

In the article the current situation and development issues of the tourism industry in the province of Tehran are given based on the analysis and generalization of factual material and statistical data of basic infrastructures, such as hotel service, air transport, vehicles, guides' institute and catering services.